

Գործունեության ամփոփում 2005 թվական  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME  
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

2005 ԹՎԱԿԱՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ռեգիստրարի կողմից  
կազմված տեղեկատվական փաստաթուղթ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	Պատմական ակնարկ, կառուցվածքն ու ընթացակարգը	3
II.	Դատարանի կազմը	11
III.	Դատարանի կողմից 2005 թվականին կայացված վճիռների առարկան	13
IV.	Չրապարակված վճիռներն ու որոշումները	35
V.	Վիճակագրական տվյալներ	39
VI.	Վիճակագրական տվյալների աղյուսակներն ըստ Պետությունների	44

Ծանոթություն. Այս ամփոփումը ներառում է 2005 թվականին Դատարանի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը և վիճակագրությունը: Մեծ Պալատի և չորս Բաժանմունքներից յուրաքանչյուրի համար առկա են նաև տարեկան գործունեության առանձին զեկույցներ:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՐ

### Պատմական ակնարկ

#### 1950 թվականի Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան մշակվել է Եվրոպայի խորհրդի շրջանակներում: Այն ստորագրությունների համար բաց է հայտարարվել 1950 թվականի նոյեմբերի 4-ին և ուժի մեջ մտել 1953 թվականի սեպտեմբերին: Հիմք ընդունելով 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Կոնվենցիան մշակողները նպատակ ունեին հետևողական լինել Եվրոպայի խորհրդի նպատակի իրականացումը՝ մարդու իրավունքների և ազատությունների հետագա պաշտպանության միջոցով: Կոնվենցիան կոչված է Համընդհանուր հռչակագրով սահմանված որոշ իրավունքների կոլեկտիվ կատարման առաջին քայլեր իրականացնել:

2. Բացի քաղաքացիական և քաղաքական իրավունքներ սահմանելուց, Կոնվենցիան նախատեսում է նաև անդամ Պետության ստանձնած պարտականությունների կատարման մեխանիզմներ: Այս պատասխանատվությունը դրվեց երեք մարմինների վրա, այն է՝ Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովը (ստեղծված 1954 թվականին), Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (ստեղծված 1959 թվականին) և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, որը կազմված էր անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներից կամ նրանց ներկայացուցիչներից:

3. Կոնվենցիայի նախնական տեքստի համաձայն, Պայմանավորվող կողմերի դեմ գանգատներ կարող էին բերվել կամ Պայմանավորվող այլ Պետությունների կամ անհատ դիմումատուների (անհատներ, անհատների խմբեր, ոչ կառավարական կազմակերպություններ) կողմից: Այնուամենայնիվ անհատական գանգատների իրավունքի ճանաչումը ընտրանքային էր և հետևաբար կարող էր իրականացվել միայն այն ընդունած պետությունների դեմ (հետագայում ընդունված թիվ 11 Արձանագրությունը նպատակ ուներ այն դարձնել պարտադիր, տես ստորև կետ 6):

Գանգատները, նախ ենթակա էին Հանձնաժողովի կողմից նախական քննության, որը որոշում էր կայացնում դրանց ընդունելիության վերաբերյալ: Այն դեպքում, երբ գանգատը հռչակվում էր ընդունելի, Հանձնաժողովը, որպես միջնորդ, կողմերին հաշտության համաձայնության առաջարկ էր ներկայացնում: Եթե համաձայնություն չէր կնքվում, Հանձնաժողովը կազմում էր գործի հանգամանքները նկարագրող և գործի էության վերաբերյալ իր կարծիքն արտահայտող զեկույց: Ջեկույցը ներկայացվում էր Նախարարների կոմիտեին:

4. Այն դեպքում, երբ պատասխանող մասնակից պետությունն ընդունում էր իր նկատմամբ Դատարանի իրավագործությունը, Հանձնաժողովը և/կամ գանգատին առնչվող յուրաքանչյուր Անդամ պետություն զեկույցը Նախարարների կոմիտեին ուղարկելուց հետո ուներ

երեք ամիս ժամանակ, որի ընթացքում պետք է գանգատը Դատարան ներկայացնել վերջնական քննության: Անհատներն իրավունք չունենին իրենց գանգատները դատարան ներկայացնելու:

Եթե գանգատը Դատարան չէր ներկայացվում, Նախարարների կոմիտեն որոշում էր արդյոք առկա է Կոնվենցիայի խախտում, և եթե, անհրաժեշտ էր «արդարացի փոխհատուցում» էր շնորհում տուժողին: Նախարարների կոմիտեն պատասխանատվություն էր կրում նաև դատարանի վճիռների կատարման նկատմամբ հսկողության համար:

### **Չետագա զարգացումները**

5. Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո ընդունվել են չորս Արձանագրություններ: Թիվ 1, 4, 6, 7, 12 և 13-րդ Արձանագրությունները լրացնում են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները, իսկ թիվ 2 Արձանագրությունը Դատարանին խորհրդատվական կարծիք տալու իրավասությամբ է օժտում: Թիվ 9 Արձանագրությունը անհատ դիմումատուներին իրավունք է տալիս իրենց գործերը ներկայացնել Դատարան, ինչը ենթակա է վավերացման պատասխանող մասնակից պետության ստուգող մարմին: Այն ուժը կորցրած է ճանաչվել թիվ 11 Արձանագրությամբ, որը վերափոխել է վճիռների կատարման համակարգը (տես ստորև): Մյուս Արձանագրությունները վերաբերվում են Կոնվենցիայի մարմինների գործունեության կազմակերպմանն ու ընթացակարգերին: 2004 թվականի մայիսին, ի պատասխան հստակ բարեփոխումների անհրաժեշտության, ստորագրությունների համար բաց հայտարարվեց թիվ 14 Արձանագրությունը (տես ստորև):

6. Սկսած 1980 թվականից, Կոնվենցիայի մարմիններին ներկայացվող գանգատների թվի հաստատումն աճը ավելի ու ավելի դժվար էր դարձնում վարույթները ողջամիտ ժամկետներում իրականացնելը: Խնդիրն ավելի ծանրացավ 1990 թվականին նոր պետությունների միացմամբ: Չանձնաժողովի կողմից գրանցված գանգատների տարեկան թիվը 1981 թվականի 404-ի համեմատ 1997 թվականին աճել է մինչև 4,750-ը: Մինչ այդ տարին, Չանձնաժողովում յուրաքանչյուր տարի չգրանցված կամ նախնական գործերի թիվն անցել է մոտ 12,000-ից: Դատարանի վիճակագրությունը նման արդյունքներ է գրանցել տարեկան կտրվածքով գործերի թվի աճի կապակցությամբ, ինչը 1997 թվականին 1981 թվականի համեմատությամբ 7-ից աճել է 119-ի:

Գործերի թվի աճը Կոնվենցիայի վերահսկիչ համակարգի բարեփոխման երկարատև բանավեճերի սկիզբ դրեց, որոնց արդյունքում ընդունվեց Կոնվենցիայի թիվ 11 Արձանագրությունը: Նպատակը կայանում էր վարույթների տևողությունը կրճատելու միջոցով կառուցվածքը պարզեցնելու և միևնույն ժամանակ համակարգի դատական նշանակությունը ուժեղացնելու մեջ, այն պարտադիր դարձնելու և Նախարարների կոմիտեի՝ որոշում կայացնող մարմնի դերը վերացնելու միջոցով:

1998 թվականի նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած 11-րդ Արձանագրությունը գոյություն ունեցող կիսով չափ զբաղվածությամբ Դատարանը և Չանձնաժողովը փոխարինեց մեկ լիազույնար Դատարանով:

7. Թիվ 11 Արձանագրությունն ուժի մեջ մտնելուն հաջորդած տարիներին Դատարանի զբաղվածությունը աճել է աննախադեպ չափով: Նոր գանգատների թիվը 1998 թվականի 18.200-ի գանգատների դիմաց, 2004 թվականին հասել է 44,100-ի, որը կազմում է մոտ 140%: Գործերի անընդհատ աճող ծավալի պայմաններում դատարանի հնարավորությունների վերաբերյալ անհանգստությունները հանգեցրեցին լրացուցիչ ռեսուրսների համար խնդրանքներին և հետագա բարեփոխումների անհրաժեշտության մասին մտորումների:

2000 թվականի նոյեմբերի 3-ին և 4-ին Հռոմում կայացած Ստորագրությունների համար Կոնվենցիայի բաց հայտարարվելու 50-ամյակի տարելիցին նվիրված Մարդու իրավունքների վերաբերյալ Նախարարների Կոնֆերանսում նախաձեռնված տարբեր բարեփոխումների արդյունքը եղավ 2004 թվականի մայիսի 13-ին թիվ 14 Արձանագրությունը ստորագրության համար բաց հայտարարելը (ավելի մանրամասն տես ստորև):

Բացի դրանից, Կոնվենցիայի կիրառման երկարատև արդյունավետության երաշխավորման տեսանկյունից թիվ 14 Արձանագրությանը նախատեսված միջոցառումների բավարար լինելու վերաբերյալ կասկածների առկայությանը պայմանավորված, 2005 թվականին Վարչապետը կայացած Եվրոպայի խորհրդի անդամ Պետությունների և Կառավարությունների գլուխների Երրորդ Համաժողովում ստեղծվեց Պրոֆեսիոնալների խումբ՝ Կոնվենցիայի համակարգերի համար երկարատև քաղաքականության մշակման նպատակով:

### ***Մարդու իրավունքների եվրոպական դատարանը***

#### **Ա. Դատարանի կառուցվածքը**

8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը ստեղծվել է 11-րդ Արձանագրությանը լրացված Կոնվենցիայի հիման վրա, բաղկացած է անդամ պետությունների քանակին հավասար թվով դատավորներից (ներկայումս քառասունվեց<sup>1</sup>): Նույն ազգությունն ունեցող դատավորների թիվը չի սահմանափակվում: Դատավորներն ընտրվում են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից վեց տարի ժամկետով:

Դատավորները դատարանում հանդես են գալիս որպես անհատ և չեն ներկայացնում որևէ պետություն: Նրանք չեն կարող զբաղվել այնպիսի գործունեությամբ, ինչն անհամատեղելի է իրենց անկախության և անաչառության, հետ կամ լրիվ աշխատանքային օրվա պահպանման պահանջի հետ: Դատավորները պաշտոնավարում են մինչև իրենց 70 տարին լրանալը:

Լիակազմ դատարանն ընտրում է իր Նախագահին, Դատարանի Նախագահի երկու տեղակալներին և Բաժանմունքների նախագահներին՝ երեք տարի ժամկետով:

9. 2006 թվականի մարտի 1-ից հետո Դատարանը բաժանվելու է հինգ Բաժանմունքների, որոնք ձևավորվում են աշխարհագրական և սեռային պատկանելիության հավասարակշռության պահպանման հիմքի

<sup>1</sup> Դատավորների ցուցակի համար տե՛ս 2-րդ մասը:

- վրա՝ երեք տարի ժամկետով: Բաժանմունքների ձևավորման ժամանակ հաշվի է առնվում նաև Անդամ պետությունների իրավական համակարգերի տարբերությունները: Բաժանմունքներից երկուսը նախագահում են Դատարանի Նախագահի երկու տեղակալները, իսկ մնացած Բաժանմունքները՝ Բաժանմունքների նախագահները: Բաժանմունքների նախագահների տեղակալները ընտրվում են Բաժանմունքների կողմից: Բաժանմունքների նախագահների տեղակալները օգնում են Բաժանմունքի Նախագահներին և անհրաժեշտության դեպքում նաև փոխարինում են վերջիններին:
10. Յուրաքանչյուր Բաժանմունքում տասներկուամսյա ժամկետով ձևավորվում են երեք դատավորից կազմված Կոմիտեներ:
11. Յուրաքանչյուր Բաժանմունքում ռոտացիոն սկզբունքով ձևավորվում են յոթ դատավորից կազմված Պալատներ, որը ներառում է Բաժանմունքի նախագահին ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ գանգատի դեպքում պատասխանող մասնակից պետության անունից ընտրված դատավորին: Բաժանմունքի այն անդամները, ովքեր Պալատի մշտական անդամներ չեն, իրենց տեղը զբաղեցնում են որպես փոխարինող անդամներ:
12. Դատարանի Մեծ պալատը կազմված է տասնյոթ դատավորից, որոնց թվում են *ex officio* անդամները, Նախագահը, Նախագահի տեղակալները և Բաժանմունքների նախագահները:

## Բ. Դատարանի ընթացակարգը

### 1. Ընդհանուր դրույթներ

13. Ցանկացած անդամ պետություն (միջպետական գանգատ) կամ անհատ (անհատական գանգատ), ով պնդում է, որ դարձել է Կոնվենցիայով երախշավորված իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ, կարող է Ստրասբուրգում գործող Մարդու իրավունքների եվրոպական դատարան անմիջականորեն գանգատ ներկայացնել: Գանգատներ ներկայացնելու վերաբերյալ ուղեցույցն ու գանգատ ներկայացնելու համար անհրաժեշտ ձևաթղթերը կարելի է ձեռք բերել Ռեգիստրից և Դատարանի ինտերնետ կայքից ([www.echr.coe.int](http://www.echr.coe.int)):
14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գործերի քննությունը մրցակցային է և հրապարակային: Լսումները, որոնք անցկացվում են միայն փոքր թվով գործերով, դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ Պալատը կամ Մեծ պալատը բացառիկ դեպքերում այլ որոշում է կայացնում: Դատարանի ռեգիստրար կողմերի ներկայացրած ներկայացված գրավոր փաստարկներն ու այլ փաստաթղթերը, որպես կանոն, մատչելի են հասարակության համար:
15. Անհատ դիմումատուները կարող են ներկայացնել իրենց գանգատներն անձամբ, սակայն իրավական ներկայացուցչությունն ցանկալի է, և որպես կանոն պարտադիր՝ պատասխանող մասնակից պետությանն գանգատի վերաբերյալ ծանուցում ուղարկելու պահից:

Եվրոպայի Խորհուրդը բավարար միջոցներ չունեցող դիմումատուների համար սահմանել է իրավական օգնության մեխանիզմ: Իրավական օգնություն չի կարող տրամադրվել նախքան համապատասխան պատասխանող մասնակից պետությանը գանգատի վերաբերյալ ծանուցում ուղարկելը:

16. Դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենն ու ֆրանսերենը, սակայն գանգատները կարող են ներկայացվել անդամ պետությունների պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Պատասխանող մասնակից պետությանը գանգատի վերաբերյալ ծանուցում ուղարկելու պահից սկսած պետք է կիրառվի Դատարանի պաշտոնական լեզուներից որևէ մեկը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պալատի կամ Մեծ Պալատի նախագահը թույլատրում է կիրառել այն լեզուն, որով ներկայացվել է գանգատը:

## 2. Ընդունելիությունն ու գործի էությունը

17. Յուրաքանչյուր անհատական գանգատ հանձնվում է Բաժանմունք:
18. Երեք դատավորից կազմված Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել գանգատը, կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման:
19. Միջպետական գանգատները, ինչպես նաև այն անհատական գանգատները, որոնք Կոմիտեի կողմից անընդունելի չեն հայտարարվում՝ ուսումնասիրվում են յոթ դատավորից կազմված Պալատի կողմից: Պալատները որոշում են կայացնում ինչպես ընդունելիության, այնպես էլ՝ գործի էության վերաբերյալ: Նման գանգատների վերաբերյալ ծանուցում է ուղարկվում պատասխանող մասնակից պետությանը՝ նրանց գրավոր առարկությունները ստանալու նպատակով: Այդ առարկություններին դիմումատուն կարող է պատասխանել, որն էլ իր հերթին ներկայացվում է պատասխանող մասնակից պետության կառավարությանը պատասխան ներկայացնելու նպատակով: Եթե գանգատը անընդունելի է, ապա Պալատը համապատասխան որոշում է կայացնում, իսկ այն դեպքում, երբ գանգատն ընդունելի է, Դատարանը շատ հաճախ նույն վճռով որոշում է կայացնում ինչպես գործի ընդունելիության, այնպես էլ՝ էության վերաբերյալ: Ընդունելիության վերաբերյալ առանձին վճիռ է կայացվում միայն առավել բարդ գանգատների առնչությամբ:
20. Գրավոր փաստարկների ներկայացման ընթացքում դիմումատուին Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ենթադրյալ խախտումից ծագած վնասների հատուցման, ինչպես նաև ծախսերի և ծախքերի համար դիմում ներկայացնելու հնարավորություն է տրվում:
21. Եթե գործը հանգեցնում է Կոնվենցիայի դրույթների մեկնաբանման առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել դատարանի՝ առավել վաղ կայացրած վճռին, Պալատները ցանկացած ժամանակ կարող են գործի ընդատությունը զիջել հօգուտ Մեծ Պալատի, եթե կողմերից ոչ մեկը

- առարկություն չի ներկայացնում նման զիջման մտադրության մասին ծանուցում ստանալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում: Ջիջման դեպքում գործի քննությունն իրականացվում է Պալատներում գործի քննության ստորև ներկայացված ընթացակարգի համաձայն:
22. Ընթացակարգը, որպես կանոն, գրավոր է: Միայն բացառիկ դեպքերում է Պալատը որոշում կայացնում բանավոր ընթացակարգով լսումներ անցկացնելու մասին: Նման լսումները, որպես կանոն, անցկացվում են ինչպես գործի ընդունելիության այնպես էլ ըստ էության քննության դեպքերում:
23. Պալատի նախագահը կարող է, արդարդատության շահերի պատշաճ իրականացման նպատակով, գործով կողմ չհանդիսացող Անդամ ցանկացած պետության կամ դիմումատու չհանդիսացող այլ շահագրգիռ անձի, առաջարկել կամ թույլատրել ներկայացնել գրավոր դիտողություններ, կամ, բացառիկ դեպքերում, մասնակցել լսումներին: Այն Անդամ պետությունը, որի քաղաքացին գործով դիմումատու է, գործի քննության ընթացքում միջամտության իրավունք ունի:
24. Այս ընթացակարգի ժամանակ Քարտուղարը կարող է բանակցություններ վարել բարեկամական կարգավորում ապահովելու նպատակով: Բանակցությունները գաղտնի են:

### 3. Վճիռները

25. Պալատները վճիռները կայացնում են ձայների մեծամասնությամբ: Գործի քննարկմանը մասնակցած յուրաքանչյուր դատավոր իրավասու է վճռին կցելու առանձին կարծիք՝ հանրնկնող կամ տարբերվող, կամ էլ պարզապես տարակարծության մասին հայտարարություն:
26. Պալատի վճռի կայացման օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործով ցանկացած կողմ կարող է խնդրել որպեսզի գործը հանձնվի Մեծ Պալատ, այն դեպքում, եթե գործն արծարծում է Կոնվենցիայի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող, կամ ընդհանուր կարևորություն ունեցող այլ լուրջ հարցի: Նման խնդրանքները քննում է Մեծ պալատի հինգ դատավորից կազմված հանձնախումբն, որը կազմված է Դատարանի նախագահից, ռոտացիայով ընտրված երկու Բաժանմունքների նախագահներից և երկու այլ դատավորից: Հանձնախումբում չի կարող ներգրավվել այն դատավորը, ով մասնակցել է Պալատի կողմից տվյալ գործով ընդունելիության կամ ըստ էության քննությանը:
27. Պալատի վճիռը դառնում է վերջնական եռամսյա ժամկետը լրանալու դեպքում կամ ավելի շուտ, եթե կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնումը Մեծ Պալատին կամ եթե հանձնախումբը որոշում է կայացնում գործը հանձնելու մասին խնդրանքը մերժելու մասին:
28. Եթե հանձնախումբը բավարարում է խնդրանքը, ապա Մեծ Պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով: Մեծ Պալատը վճիռ է կայացնում ձայների մեծամասնությամբ և վերջինիս վճիռները վերջնական են:

29. Դատարանի բոլոր վերջնական վճիռները պարտադիր են պատասխանող մասնակից պետությունների համար:
30. Վճիռների կատարման նկատմամբ հսկողության պարտականությունը դրված է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի վրա: Նախարարների կոմիտեն հսկում է արդյոք պետությունը, որի մասնակցությամբ գործով Կոնվենցիայի նորմերի խախտում է արձանագրվել, համապատասխան միջոցներ է ձեռք առել Դատարանի վճռից բխող կոնկրետ կամ ընդհանուր բնույթի պարտավորությունները կատարելու ուղղությամբ:

#### 4. Արձանագրություն թիվ 14

31. Թիվ 14 Արձանագրությունը ուժի մեջ կմտնի բոլոր Անդամ պետությունների կողմից այն վավերացնելուց հետո: Դատարանի ընթացակարգում Արձանագրությամբ նախատեսված հիմնական փոփոխությունները հետևյալն են.

ա. Երեք դատավորից կազմված կոմիտեն (Կոնվենցիայի նոր 26-րդ հոդված) փոխարինվում է մեկ դատավորով (նոր 27-րդ հոդված), որը միևնույն հիմքով, ինչ որ Կոմիտեն, կարող է զագատները հայտարարել անընդունելի: Դատավորին աջակցում են դատական քարտուղարները (նոր 24-րդ հոդված մաս 1-ին), ովքեր անընդունելի հայտարարված գանգատների առնչությամբ կունենան նույն իրավունքները ինչ որ ներկայիս դատավոր-քարտուղարները: Մեկ դատավորը չի կարող լինել այն դատավորը ով ընտրվել է պատասխանող մասնակից պետության անունից:

բ) Երեք դատավորից կազմված Կոմիտեն ձեռք է բերում նոր իրավունքներ: Ի լրացումն ներկայիս գործերը անընդունելի հայտարարելու և ցուցակից հանելու իրենց իրավունքին, Կոմիտեն օժտվում է գործերը ընդունելի հայտարարելու և դրանց կապակցությամբ վճիռ կայացնելու իրավունքով, եթե այդ գործերում արժարժվող հարցերի վերաբերյալ դատարանն իր մոտեցումն արդեն արտահայտել է իր նախորդ վճիռներում (28-րդ հոդված, 1-ին մասի բ. ենթակետ՝ փոփոխված տարբերակ):

գ) 35-րդ հոդվածում ավելացել է ընդունելիության նոր պայման: 35-րդ հոդվածի 3-րդ մասի բ ենթակետի համաձայն Դատարանը իրավասու կլինի անընդունելի հայտարարելու անհատական գանգատները, եթե դիմումատուն զգալի վնաս չի կրել: Սակայն, գործերը չեն կարող անընդունելի հայտարարվել այդ հիմքով, եթե «մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը» պահանջում է գործի ըստ էության քննություն, կամ այն դեպքերում, երբ գործը պատշաճ կարգով չի քննվել ներպետական տրիբունալում: Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում այս պայմանը կարող է կիրառվել միայն Պալատների և Մեծ Պալատի կողմից:

դ) Ներկայիս 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված զանգատի ընդունելիության և էության վերաբերյալ որոշումները համատեղ կայացնելու Դատարանի անընդհատ աճող պրակտիկան՝ այժմ ամրագրված է 29-րդ հոդվածում:

ե) ինչ վերաբերում է [վճիռների] կատարմանը, ապա Նախարարների Կոմիտեի համար նախատեսվել են երկու նոր հնարավորություններ: Առաջին, այն դեպքերում, երբ վճռի կատարմանը խոչնդոտում են մեկնաբանության հետ կապված հարցերը, [Նախարարների կոմիտեն] կարող է գործը ուղարկել դատարան որոշում կայացնելու համար (նոր 46-րդ հոդված, մաս 3): Երկրորդ, այն դեպքերում, երբ Պատասխանող մասնակից պետությունը հրաժարվում է կատարել վերջնական վճիռը, Նախարարների կոմիտեն կարող է Դատարանում հարց բարձրացնել, որոշելու, արդյոք պատասխանող մասնակից պետությունը պահպանում է վճիռները կատարելու իր պարտականությունը (նոր 26-րդ հոդված, մաս 4):

32. Ինչ վերաբերում է դատավորներին, ապա միակ փոփոխությունը վերաբերում է նրան, որ դատավորների պաշտոնավարման ժամկետը ինը տարի է, որով վերացվել է ներկայումս գործող վեց տարի պաշտոնավարելուց հետո վերընտրման իրավունքը (Կոնվենցիայի 23-րդ հոդվածի փոփոխված 1-ին մաս): Ի լրացումն, համաձայն 14-րդ Արձանագրության, ad hoc դատավորները, ովքեր փոխարինում են այն ընտրված դատավորներին, որ չեն կարող մասնակցել դատական լսումներին որպես ազգային դատավոր, պետք է ընտրվեն Դատարանի նախագահի կողմից նախապես ներկայացված ցուցակից, փոխարինելով ներկայումս գործող Պատասխանող մասնակից պետության կողմից նշանակվելու ընթացակարգը (նոր 26-րդ հոդված, մաս 4):

33. Վերջապես, 59-րդ հոդվածը փոփոխվել է և ավելացած նոր 2-րդ մասը սահմանում է , որ Եվրոպայի Միությունը կարող է միանալ Կոնվենցիային:

### **5. Խորհրդատվական եզրակացություններ**

34. Դատարանը, Նախարարների Կոմիտեի խնդրանքով կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ:

Խորհրդատվական եզրակացություն խնդրելու վերաբերյալ Նախարարների կոմիտեի որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ:

35. Խորհրդատվական եզրակացությունները տրվում են Մեծ Պալատի կողմից և ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ, առանձին կամ ուղղակի տարբերվող կարծիք:

## II. ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

(2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)<sup>2</sup>

Պրն. Լուցիուս Ուիլդհաբեր, Նախագահ	(Շվեյցարացի)
Պրն. Խրիստոս Ռոզակիս, Փոխնախագահ	(Հուն)
Ժան-Պոլ Կոստա, Փոխնախագահ	(Ֆրանսիացի)
Սրբ Նիկոլաս Բրատցա, Բաժնի Նախագահ	(Բրիտանացի)
Պրն. Բոչչան Ջուլյանչիչ	(Սլովեն)
Պրն. Ջիովաննի Բոնելլո	(Մալտացի)
Պրն. Լուցիուս Կաֆլիշ	(Շվեյցարացի <sup>3</sup> )
Պրն. Լուկիս Լուկաիդես	(Կիպրոսցի)
Պրն. Իրենեու Կաբրալ Բարետտո	(Պորտուգալացի)
Պրն. Ռիգա Թուրմեն	(Թուրք)
Տիկին Ֆրանսուազ Թուլբենգ	(Բելգիացի)
Պրն. Կոռնելիու Բիրսան	(Ռումինացի)
Պրն. Պիեռ Լորենսեն	(Դանիացի)
Պրն. Կարել Յունգվիրտ	(Չեխ)
Պրն. Վոլոդիմիր Բուտկեվիչ	(Ուկրաինացի)
Պրն. Յոզեֆ Կասադեվալլ	(Անդորրացի)
Տիկին Նինա Վայիչ	(Խորվաթ)
Պրն. Ջոն Չեդիզան	(Իռլանդացի)
Պրն. Մատտի Պելլոնպաս	(Ֆինն)
Տիկին Մարգարիտա Ցացա-Նիկոլովսկա	(«Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետության» քաղաքացի)
Պրն. Անդրաս Բակա	(Հունգարացի)
Պրն. Ռաիտ Մառուցե	(Էստոնացի)
Պրն. Կրիստա Տրաժա	(Ալբանացի)
Տիկին Սնեժանա Բոտուչարովա	(Բուլղարացի)
Պրն. Մինդիա Ուգրեկելիդզե	(Վրացի)
Պրն. Անատոլի Կովլեր	(Ռուս)
Պրն. Վլադիմիրո Ջագրեբելսկի	(Իտալացի)
Տիկին Անտոնելլա Մուլարոնի	(Սան-Մարինոցի)
Տիկին Էլիզաբեթ Ստեյներ	(Ավստրիացի)
Պրն. Ստանիսլավ Պավլովչի	(Մոլդովացի)
Պրն. Լեչ Գառլիցկի	(Լեհ)
Պրն. Խավիեր Բոռնեգո Բոռնեգո	(Իսպանացի)
Տիկին Էլիզաբեթ Ֆուրա-Սանդստրյոն	(Շվեդ)
Տիկին Ալվինա Գյուլունյան	(Հայ)

<sup>2</sup> Մոնակոյի անունից ներկայացվող դատավորի տեղը ներկայումս թափուր է:

<sup>3</sup> Լիխտենշտեյնի անունից ընտրված դատավոր:

Գործունեության ամփոփում 2005 թվական  
 Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
 կազմակերպության կողմից

Պրն. Խանլար Հաջիեվ	(Ադրբեջանցի)
Տիկին Լյիլյանա Միյովիչ	(Բոսնիայի և Հերցոգովինայի քաղաքացի)
Պրն. Դեյան Սալիմանն	(Լյուքսեմբուրգցի)
Տիկին Ռենատա Ժեգեր	(Գերմանացի)
Պրն. Էգբերտ Սայեր	(Նիդեռլանդացի)
Պրն. Սվերրե Յերենս	(Նորվեգացի)
Պրն. Դավիդ Թոռ Բյորգվինստոն	(Իսլանդացի)
Տիկին Դանուբե Յոսիենե	(Լիտվացի)
Պրն. Ժան Սիկուտա	(Սլովակ)
Պրն. Դրագոյուբ Պոպովիչ	(Սերբիայի և Չեռնոգորիայի քաղաքացի)
Օրիորդ Ինետա Ջիենելե	(Լատվիացի)
Պրն. Էրիկ Ֆրիբերգ, ռեգիստրար	(Շվեդ)

Գործունեության ամփոփում 2005 թվական  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից  
**III. Դատարանի կողմից 2005 թվականին կայացված վճիռների առարկան**

**(a) Ըստ Կոնվենցիայի հոդվածների դասակարգված վճիռների առարկան**

**2-րդ Զոդված – Կյանքի իրավունքին վերաբերող գործեր**

- Անհետացումներ և հետաքննությունների արդյունավետությունը (*Türko g lu v. Turkey*, թիվ 34506/97, *Mevlûde Akdeniz v. Turkey*, թիվ 25165/94, *To g cu v. Turkey*, թիվ 27601/95, *Tani ş and others v. Turkey*, թիվ 65899/01, *Özgen and others v. Turkey*, թիվ 38607/97, *Nesibe Haran v. Turkey*, թիվ 28299/95)
- Առևանգում և դիմումատուի եղբոր սպանություն ինչպես նաև հետաքննության արդյունավետությունը (*Koku v. Turkey*, թիվ 27305/95)
- Ինքնությունը չպարզված անձանց կողմից դիմումատուի ամուսնու սպանություն՝ նրա ազատությունը սահմանափակված լինելու ժամանակ և հետաքննության արդյունավետությունը (*Süheyla Aydin v. Turkey*, թիվ 25660/94, *Çelikbilek v. Turkey*, թիվ 27693/95, *Yasin Ate ş v. Turkey*, թիվ 30949/96)
- Պատգամավորական առանձնատների շրջակայքում Պատգամավորի տղայի որդու սպանության չկանխելը և հետաքննության արդյունավետությունը (*Güngör v. Turkey*, թիվ 28290/95)
- Ձինվորական ոստիկանության կողմից Երկու անգն զնչու զինակոչիկների սպանություն, ովքեր փախուստի էին դիմել առանց թույլտվության բացակայելու համար իրենց նկատմամբ նշանակված կալանքը կրելու վայրից, ինչպես նաև հետաքննության արդյունավետությունը (*Nachova and others v. Bulgaria*, թիվ. 43577/98 և 43579/98 [GC])
- Ոստիկանության կողմից մահաբեր հրաձգության իրականացում և հետաքննությունների արդյունավետությունը (*Bubbins v. United Kingdom*, թիվ 50196/99, *Ramsahai and others v. the Netherlands*, թիվ 52391/99)
- Ոստիկանության կողմից ցուցարարների վրա կրակելը և հետաքննության արդյունավետությունը (*Ş im ş ek and others v. Turkey*, թիվ 35072/97 և թիվ 37194/97)
- Չեզոք տարածքում թուրք զինվորների կողմից հույն-կիպրոսցու սպանություն և հետաքննության արդյունավետությունը (*Kakoulli v. Turkey*, թիվ 38595/97)
- Զյուսիսային Կիպրոսում ենթադրաբար թուրք և/կամ Զյուսիսային Կիպրոսի Թուրքական Զանրապետության (TRNC) գործակալների կողմից Դիմումատուի ամուսնու սպանություն և հետաքննության արդյունավետությունը (*Adali v. Turkey*, թիվ 38187/97)
- Մեկ այլ կասկածյալի տուն գնալիս ոստիկանությանը ուղեկցող ձերբակալվածի սպանություն (*Gezici v. Turkey*, թիվ 34594/97)
- Քաղաքացիական ավտոմեքենայի վրա, որով դիմումատուի բարեկամները տեղափոխվում էին ոստիկանության հսկողության ներքո, իրականացված հարձակման հետևանքով դիմումատուի բարեկամների սպանություն, և հետաքննության արդյունավետությունը (*Beliza Kaya and others v. Turkey*, թիվ 33420/96 և թիվ 36206/97)
- Անվտանգության ուժերի կողմից կատարված սպանությունները և հետաքննությունների արդյունավետությունը (*Mente ş e and others v. Turkey*, թիվ 36217/97, *Fatma Kacar v. Turkey*, թիվ 35838/97, *Dş ndar v. Turkey*, թիվ 26972/95)

Գործունեության ամփոփում 2005 թվական

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

- Դիմումատուների բարեկամների սպանությունները և գյուղի ոստիկանների կողմից երկու դիմումատուներին մարմնական վնասվածք հասցնելը, ինչպես նաև հետաքննության արդյունավետությունը (*Acar and others v. Turkey*, թիվ 36088/97 և թիվ 38417/97)

- Ռազմական գործողությունների ժամանակ դիմումատուների բարեկամների սպանություն (*Akkum and others v. Turkey*, թիվ 21894/93)

- Ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումների ժամանակ դիմումատուների բարեկամների սպանություն և հետաքննության արդյունավետությունը (*Hamiyet Kaplan and others v. Turkey*, թիվ 36749/97)

- Ձինվորների կողմից կատարված սպանություն (*Khashiyev and Akayeva v. Russia*, թիվ 57942/00 – թիվ 57945/00), քաղաքացիական տրանսպորտի ռմբակոծում (*Isayeva and others v. Russia*, ԱՇԻ 57947/00, 57948/00 և թիվ 57949/00) և գյուղի ռմբակոծում (*Isayeva v. Russia*, թիվ 57950/00): Այս բոլորը գործերով իրադարձությունները տեղի են ունեցել Չեչնիայում:

- Քրդական Բանվորական Կուսակցության (ՔԲԿ) և անվտանգության ուժերի միջև ծագած բախման հետևանքով Դիմումատուի մահվան կապակցությամբ հարուցված գործով հետաքննության արդյունավետությունը (*Kanliba ş v. Turkey*, թիվ 32444/96)

- Իշխանությունների կողմից լրագրողի կյանքը փրկելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելը և հետաքննության արդյունավետությունը (*Gongadze v. Ukraine*, թիվ 34056/02)

- Ձինակոչիկի ինքնասպանությունը դեպրեսիայի հետևանքով (*Kilinç and others v. Turkey*, թիվ 40145/98)

- Ինքնասպանությունը բանտում և հետաքննության արդյունավետությունը (*Trubnikov v. Russia*, թիվ 49790/99)

- Կալանավայրում սպանության դեպքը և հետաքննության արդյունավետությունը (*Ki ş mir v. Turkey*, թիվ 27306/95, *H.Y. և Hü.Y. v. Turkey*, թիվ 40262/98, *Akdo g du v. Turkey*, թիվ 46747/99)

- Կարգը խախտելուց հետո կալանավորին մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու ընթացքում նրա սպանություն և հետաքննության արդյունավետությունը (*Ceyhan Demir and others v. Turkey*, թիվ 34491/97)

- Սահապատժի կիրառման սպառնալիքը (*Öçalan v. Turkey*, թիվ 46221/99 [GC])

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից  
**3-րդ հոդված** -- *Ֆիզիկական անձեռնմխելիությանը վերաբերող գործեր*

- Անարդար դատաքննության արդյունքում մահապատժի նշանակում և մահապատժի կիրառման սպառնալիք (*Öçalan v. Turkey*, թիվ 46221/99 [GC])
- Ենթադրաբար պետական ծառայողների կողմից կան նրանց մասնակցությամբ իրականացված առևանգում և վատ վերաբերմունքի դրսևորում, ինչպես նաև հետաքննության արդյունավետությունը (*Ay v. Turkey*, թիվ 30951/96)
- Ձերբակալման ժամանակ և կալանքի տակ լինելու ընթացքում երկու գնչուների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորում (*Bekos and Koutropoulos v. Greece*, թիվ 15250/02)
- Կալանքի տակ գտնվելու ընթացքում վատ վերաբերմունքի դրսևորում (*Sunal v. Turkey*, թիվ 43918/98, *Biyani v. Turkey*, թիվ 56363/00, *Gültekin and others v. Turkey*, թիվ 52941/99, *Dalan v. Turkey*, թիվ 38585/97, *Hasan Kılıç v. Turkey*, թիվ 35044/97, *Karakaş and Yeşilyılmaz v. Turkey*, թիվ 43925/98, *S.B. and H.T. v. Turkey*, թիվ 54430/00, *Soner Önder v. Turkey*, թիվ 39813/98, *Dizman v. Turkey*, թիվ 27309/95, *Frik v. Turkey*, թիվ 45443/99, *Sevgin and Ince v. Turkey*, թիվ 46262/99, *Baltaş v. Turkey*, թիվ 50988/99, *Karayiğit v. Turkey*, թիվ 63181/00, *Cangöz v. Turkey*, թիվ 28039/95, *Günaydin v. Turkey*, թիվ 27526/95, *Orhan Aslan v. Turkey*, թիվ 48063/99, *Hüsnüye Tekin v. Turkey*, թիվ 50971/99, *Afanasyev v. Ukraine*, թիվ 38722/02)
- Օդանավակայանի տարանցիկ տարածքում կալանքի պայմաններն ու վատ վերաբերմունքը (*Mogos v. Romania*, թիվ 20420/02)
- Նախքան ձերբակալվածների կողմից կալանավայրում իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մասին բողոքի հիման վրա դատաքննությունը սկսելը, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորում (*Zülcihan Şahin and others v. Turkey*, թիվ 53147/99)
- Ահաբեկչության մեջ կասկածվող անձի մեկուսի բանտարկություն՝ առավել քան ութ տարի (*Ramirez Sanchez v. France*, թիվ 59450/00) [Ներկայումս գործը Մեծ Պալատի վարույթում է]
- Ավելի քան տասնմեկ ամիս մեկուսի կալանքի տակ պահվելը (*Rohde v. Denmark*, թիվ 69332/01)
- Կալանավորներին պահելու վայրի պայմանները (*Kehayov v. Bulgaria*, no. 41035/98, *Mayzit v. Russia*, թիվ 63378/00, *Novoselov v. Russia*, թիվ 66460/01, *Labzov v. Russia*, թիվ 62208/00, *Fedotov v. Russia*, թիվ 5140/02, *Khudoyorov v. Russia*, թիվ 6847/02, *Becciev v. Moldova*, թիվ 9190/03, *Alver v. Estonia*, թիվ 64812/01)
- Կալանավորներին պահելու վայրի պայմանները (*Karalevičius v. Lithuania*, թիվ 53254/99, *Ostrovar v. Moldova*, թիվ 35207/03, *I.I. v. Bulgaria*, թիվ 44082/98, *Georgiev v. Bulgaria*, թիվ 47823/99)
- Կալանքի պայմանները, հացադուլ հայտարարած ձերբակալվածին ուտել հարկադրելը և մատուցված բժշկական օգնության համապատասխանությունը (*Nevmerzhitsky v. Ukraine*, թիվ 54825/00)
- Կալանավորներին պահելու վայրի պայմանները. ձերբակալվածին ենթադրաբար սանիտարական վատ պայմաններում պահելը, մեկուսի ձերբակալություն և ձերբակալվածի կալանքի պայմանները բարելավելու կամքի բացակայություն, եղանակից և կլիմայից պաշտպանության համար միջոցների բացակայություն, մաքուր օդի դուրս գալու և մարմնամաքողությամբ զբաղվելու համար խոչընդոտների առկայություն, ֆիզիկական ուժի ենթադրաբար կիրառում, ինչպես նաև բժշկական օգնության տրամադրման մերժում (*Mathew v. the Netherlands*, թիվ 24919/03)

Գործունեության ամփոփում 2005 թվական  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

- Հոգեբուժական հիմնարկներում պահելու պայմանները (*Romanov v. Russia*, թիվ 63993/00)
- Կալանքի տակ գտնվելու ընթացքում մատուցված բժշկական օգնության անհամապատասխանությունը (*Sarban v. Moldova*, թիվ 3456/05)
- Վերնիկ-Կորսակովի սինդրոմից տառապող անձին կալանքի ենթարկելը կամ բանտ վերադարձնելու սպառնալիք ներկայացնելը (*Uyan v. Turkey*, թիվ 7454/04, *Sinan Eren v. Turkey*, թիվ 8062/04, *Tekin Yildiz v. Turkey*, թիվ 22913/04, *Kuruçay v. Turkey*, թիվ 24040/04, *Gürbüz v. Turkey*, թիվ 26050/04, և *Balyemez v. Turkey*, թիվ 32495/03. այս հարցը արծարծող զանգատները գործերի ցուցակից հանելու վերաբերյալ նաև երեք վճիռներ են ընդունվել)
- Գնչու ընտանիքների ապրելու պայմանները՝ ամբոխի կողմից նրանց տները ոչնչացնելուց հետո և նրանց ներկայացրած բողոքների առնչությամբ իշխանությունների կողմից արված ռասիստական մեկնաբանությունները (*Moldovan and others v. Romania* (թիվ. 2), թիվ 41138/98 և 64320/01; տե՛ս նաև *Moldovan and others v. Romania* (թիվ. 1) (բարեկամական կարգավորում))
- Էքստրադիցիա Ուզբեկստան (*Mamatkulov and Abdurasulovic v. Turkey*, թիվ 46827/99 [GC]; Գործով նաև հարց բարձրացավ Դատարանի կողմից մատնանշած ժամանակավոր միջոցառումների պահանջները Թուրքիայի կառավարության կողմից չկատարելու առնչությամբ)
- Վրաստանից Ռուսաստանի Դաշնություն էքստրադիցիա կամ էքստրադիցիայի սպառնալիք, ինչպես նաև կալանքի տակ գտնվող որոշ դիմումատուների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորում (*Shamayev and others v. Georgia and Russia*, թիվ 36378/02)
- Երիտրեա էքստրադիցիայի սպառնալիք ներկայացնելը (*Said v. the Netherlands*, թիվ 2345/02)
- Դիմումատուներին՝ Սիրիա էքստրադիցիայի սպառնալիք ներկայացնելը, որտեղ նրանք դատապարտվել էին մահապատժի (*Bader and others v. Sweden*, թիվ 13284/04)
- Իրաք էքստրադիցիայի սպառնալիքի ներկայացում և փախստականներին հասանելի սոցիալական և ֆինանսական օգնություն չտրամադրելը (*Muslim v. Turkey*, թիվ 53566/99)
- Կոնգոյի Ժողովրդավարական հանրապետություն էքստրադիցիայի սպառնալիք ներկայացնելը (*N. v. Finland*, թիվ 38885/02)

#### **4-րդ հոդված – Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելման վերաբերյալ գործեր**

- «Ներպետական ստրկության» կանխարգելման նպատակով ընդունված իրավական նորմերի պատշաճությունը (*Siliadin v. France*, թիվ 73316/01)

#### **5-րդ հոդված -- Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ գործեր**

- Վերադաս սպայի կողմից նշանակված կարգապահական պատասխանատվության արդյունքում զինվորի կալանավորում (*A.D.v. Turkey*, թիվ 29986/96)
- Գործը բացելը մերժելուն հաջորդող հեռակա կարգով իրականացվող դատապարտման հետևանքով շարունակական կալանքի օրինականությունը, ինչպես նաև կալանքի օրինականությունը վիճարկելու հնարավորությունների բացակայությունը (*Stoichkov v. Bulgaria*, թիվ 9808/02)

Գործունեության ամփոփում 2005 թվական

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից  
- Քենիայում Թուրքիայի անվտանգության ուժերի կողմից իրականացված կալանքի և ձերբակալման օրինականությունը, ինչպես նաև ձերբակալման [վերաբերյալ որոշման] օրինականության վիճարկման հնարավորության բացակայությունը (*Öçalan v. Turkey*, թիվ 46221/99)

- Արգելված հավաքից հեռանալուց հրաժարվելու համար ձերբակալում և 19 ժամ կալանք (*Apple v. Germany*, թիվ 77909/01)

- Օրենքով սահմանված կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը լրանալուց հետո կալանքի տակ պահելը և կալանքից ազատելու մասին հրամանի կատարման հետաձգումը (*Picaro v Italy*, թիվ 42644/02)

- Կալանքից ազատելը 63 օրով հետաձգելը (*Asenov v. Bulgaria*, թիվ 42026/98)

- Կալանքի ժամկետը երկարացնելու մասին հրաման տալուց հետո հարցաքննության համար ձերբակալվածներին ոստիկանություն տանելու մասին դատավորի կողմից հանձնարարական տալը, ինչպես նաև վարույթի վերանայման հնարավորության բացակայություն (*Emrullah Karagöz v. Turkey*, թիվ 78027/01, *Da g and Ya ş ar v. Turkey*, թիվ 4080/02)

- ՉԻԱՅ-ի վարակ կրող հիվանդի հարկադիր մեկուսացում՝ այլ անձանց վարակելու ռիսկի հիմքով (*Enhorn v. Sweden*, թիվ 56529/00)

- Մասնավոր հոգեբուժական հիվանդանոցում անազատության մեջ պահելու իրավաչափությունը (*Storck v. Germany*, թիվ 61603/00)

- Հոգեբուժական հիմնարկում կալանքի տակ պահելու օրինականությունը (*Schenkel v. the Netherlands*, թիվ 62015/00)

- Պայմանական վաղալետ ազատման համար պահանջվող պայմանների կատարման գործնական անհնարինությամբ պայմանավորված շարունակաբար հոգեբուժական հիմնարկում պահելը (*Kolanis v. United Kingdom*, թիվ 517/02)

- Արտաքսման նպատակով կալանքի տևողությունը և օրինականությունը (*Bordovskiy v. Russia*, թիվ 49491/99)

- Արտաքսման նպատակով կալանքի օրինականությունը, բացառությամբ արտաքսման մասին որոշման վերացման դեպքի (*Ze č iri v. Italy*, թիվ 55764/00)

- Արտաքսման նպատակով կալանքի տևողությունը և ազատ արձակելու մասին խնդրանքի քննության ժամկետի երկարությունը (*Singh v. the Czech Republic*, թիվ 60538/00)

- Դատախազի դերը կալանքի տակ պահելու մասին որոշման կայացման/հաստատման գործում (*Salov v. Ukraine*, no. 65518/01)

- Հոգեբուժական հաստատությունում կալանքից ազատվելու մասին խնդրանքի ներկայացման հնարավորության բացակայություն (*Gorshkov v. Ukraine*, թիվ 67531/01)

- Մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու հարցի կապակցությամբ դռնբաց դատական քննության բացակայություն (*Reinprecht v. Austria*, թիվ 67175/01)

**6-րդ հոդված – Արդար դատաքննության իրավունքին վերաբերող գործեր**

- Վիրավորանքի գործով անվճար իրավաբանական օգնությունն չտրամադրելը (*Steel and Morris v. the United Kingdom*, թիվ 68416/01)

Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

- Ջինվորական ծառայության ժամանակ կրած վնասի կապակցությամբ պետության դեմ բողոք բերելու իրավունքի բացակայություն (*Roche v. the United Kingdom*, թիվ 32555/96 [GC])
- Պաշտամենտական անձեռնմխելիության կիրառումը պատգամավորի կատարած վիրավորական հայտարարությունների առնչությամբ (*Ielo v. Italy*, թիվ 23053/02)
- Աջակողմյան խմբավորման կողմից ձայնագրված լազերային ձայնասկավառակների առգրավումը և բռնագանձումը վիճարկելու համար դատարանի մատչելիությունը (*Linnekogel v. Switzerland*, թիվ 43874/98)
- Դատական ծախսերի բարձր լինելու պատճառով դատարանի անմատչելիությունը (*Podbielski and PPU Polpure v. Poland*, թիվ 39199/98, *Kniat v. Poland*, 71731/01, *Jedamski and Jedamska v. Poland*, թիվ 73547/01),
- Բանտարկյալների նկատմամբ անվտանգության ուժեղացված միջոցառումների կիրառման փաստը վիճարկելու համար դատարանի մատչելիությունը (*Musumeci v. Italy*, no. 33695/96, *Bifulco v. Italy*, թիվ 60915/00, *Gallico v. Italy*, no. 53723/00, *Salvatore v. Italy*, թիվ 42285/98),
- Գերագույն դատարանի կողմից բողոքի մերժումը վերաքննիչ և ստորադաս դատարանների վճիռներում ծառայության տարբեր ժամկետներ նշված լինելու հիմքով (*Mikulová v. Slovakia*, թիվ 64001/00) և բողոքի մերժումը ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ, չնայած այն հանգամանքին, որ բողոքը ուղարկվել էր պատվիրված նամակով նախքան սահմանված ժամկետի ավարտը (*Hornáček v. Slovakia*, թիվ 65575/01)
- Վարչական վարույթում երրորդ կողմի մասնակցության մերժում (*Budmet Sp. Z O. O. v. Poland*, թիվ 31445/96)
- Անզգուշության հետևանքով հղիության ժամանակ արատները չհայտնաբերելու արդյունքում կրած վնասների կապակցությամբ բողոք ներկայացնելու ծնողների իրավունքը բացառող նոր օրենսդրության կիրառումը ընթացիկ դատական վարույթի ժամանակ (*Draon v. France*, no. 1513/03 [GC], և *Maurice v. France*, թիվ 11810/03 [GC])
